

ՀԱՉԱԿ

ՍՕՅԵԼԻՍՏԵՍԿԱՆ ԴԵՂԵՓԵՐԸ.

II

Դժգոյ ժամանակ այն կարծիքն էր տիրում, որ մարդկային թշուառութիւնների պատճառն ինքը մարդն է, նրա չար կամքն է, մի պատմական թիւրամացութիւնն է մարդկանց մէջ: Ենթադրւում էր, որ մարդկային կամքն ընդունակ է և կարող է հասարակային յայտնի պայմանաւորութեամբ մարդկանց մէջ վերակազմել մարդկութեան հանրակացութիւնը, վերացնել հասարակութեան զանազան խաւերի մէջ դէպի իրար ունեցած թշնամութիւններն ու հակառակութիւնները և հաստատել կեանքի մէջ ոսկէ դար՝ անվերջ վայելքներով, համերաշխ յարաբերութիւններով: Քիչ աւելի հեռու գնալով՝ այդ հայեցողութիւնը սկսաւ մեղադրել զանազան անհատներին, իշխող, կառավարող անհատներին ու քաղաքական մարմիններին, դրանց չար կամքը համարելով առաջին ու վերջին պատճառն ամեն թշուառութիւնների և առաջին ու վերջին արդեւքն ամեն առաջնորդութեան ու բարօրութեան: Այդ հայեացքներն, ի հարկէ, չափազանց վերացական էին, որ չէին հիմնւում ոչ մի գիտական հետազոտութեան վրայ մարդկութեան հասարակական յարաբերութիւնների շրջանում: Մինչև մեր օրերն իսկ տակաւին շատ-շատերն ունեն այդպիսի կարծիք և անիշխանական կոչված հայեացքների մի մեծ մասը նոյն այդ ոգին է կրում: Բայց գիտութեան զարգացումով՝ մարդկային խելքը սկսաւ հարց տալ թէ որո՞նք են թըշուառութիւնների հասարակային, կենսական պատճառները, որո՞նք են հասարակութեան զանազան խաւերի դէպի միմեանց ունեցած հակառակութիւնների շարժառիթները եւ արդեօք մարդկային կամքը մինչև որ աստիճան կարող է հասարակական, կենսական ախրող պայմաններից անկախ լինել եւ անկախ գործել: Գիտական մտքի հետազոտութեան շարունակութիւնըն ռաւաջացնում էր դարձեալ նորանոր հարցեր. — թէ մարդկային թշուառութիւնների, կենսական անվերջ կռիւների հիմնական պատճառները չեն գտնվում արդեօք մարդկութեան զուտ նիւթական (matériel) յարաբերութիւնների մէջ, ապրելու, ուտելու, արդիւնաբերելու, աշխատելու եղանակների ու ձեւերի մէջ թէ արդեօք այդ յարաբերութիւնները չեն, որ

կեանքի, գոյութեան հիմնական ու գլխաւոր պայմաններն են և որ գծում են առհասարակ հասարակութեան ու մասնաւորապէս նրա զանազան խաւերի պատմական ուղին, գործերը և պատճառում դրանց, այդ խաւերի, հակառակութիւններն ու կռիւները, և թէ արդեօք մարդն, անհատն իր ընթացքով ու հոգեկանով ենթարկված չէ թէ բնութեան, կլիմայի ազդեցութեան և թէ գոյութեան այդ վերոյիշած արուեստական պայմանների:

Պնել այդպիսի հարցեր նշանակում էր հետազոտել նրանց հիմնական կերպով, և գիտութեան պարզացման աստիճանն արդէն թոյլ էր տալիս որոշապէս պատասխանել այդ հարցերին: Գարուս մէջ, մանաւանդ երկրորդ կեսում, արսծ գիտական հետազոտութիւններն կատարելապէս ապացուցանում են, որ մարդկային հասարակութեան ամենանախնական, սկզբնական կեանքի անտեսական պայմանները համայնական, հաւաքական են եղել: Երկիրը, դաշտերը չէին պատկանում անհատներին, ինչպէս յետոյ եղաւ և այժմ է, այլ ընդհանուր սեփականութիւն էին ամբողջ հասարակութեան, համայնքին կամ ջեղին: Արատատեղիները, անտառները նոյնպէս պատկանում էին ամենքին միաժամանակ, ինչպէս դեռ այժմ էլ շատ երկրներում, մի դրութիւն, որ մնացել է այդ հին ժամանակներից: Աւարելի հողերն էլ կրկին ընհանուր սեփականութիւն էին, այդ հողերը փոփոխակի կերպով յայտնի տարի ժամանակամիջոցով բաժանվում էին գերդաստանների մէջ՝ համաձայն իւրաքանչիւրի ոյժերին ու պէտքերին: Այդպիսի անտեսական պայմանների դրութեամբ ամենքն աշխատաւոր էին, ամեն-մէկն աշխատում էր իրան համար և ապրում էին կատարեալ համերաշխութեամբ ու հաւասարութեան մէջ, միմեանց օգնելով, ոչինչ պահանջ չունենալով միմեանցից: Տեսնական համայնական պայմանները նրանց մէջ ստեղծել էին մէկ այնպիսի հասարակական վիճակ, որ ընդհանուր բարօրութիւնն ապահովված էր: Կանաւոր սեփականատիրութիւնը դրանից յետոյ, ամեն տեղ ստեղծեց այնպիսի ակտեր, ինչպէս գողութիւնը, աւաղակութիւնը, կեղծաւորութիւնը, խաբէրայութիւնը և այլն, որոնք բոլորովին անմտնօթ էին համայնական կարգերին: Համայնական սեփականատիրութեան ժամանակ նախնական դարերում օրէնքների փոխանակ թագաւորում էին սովորութիւններն, աւանդութիւնները, որոնք չէին կարող այլ կերպ լինել, եթէ ոչ այնպէս, ինչպէս պահանջում էր

անտեսական համայնական պայմանների ոգին, այն է՝ համերաշխութեան, հաւաստութեան վրայ հիմնված: Համայնական սեփականատիրութեան միջոցին մարդկանց բարոյական առհասարակ թերված էր դէպի առաքինութիւն, և նրանց թերութիւնները, որոնք սակայն երբէք այնպէս խոշոր ու ապականված չէին, ինչպէս այժմ են, միշտ ենթարկվում էին ընդհանրութեան անհաւանութեան և պոխարակման: Համայնական սեփականատիրութեան ժամանակ գոյութեան համար մղված պատերազմը բնութեան դէմ կատարվում էր ընդհանրութեան կողմից միահամուռ կերպով: Այդօրինակ համայնական կարգեր, տակաւին մինչեւ օրս էլ գոյութիւն ունեն, մնալով հին ժամանակներից, Ամերիկայի, Ասիայի և մինչեւ իսկ Ռուսաստանի մի քանի տեղերը: Գրանք կենդանի ապացոյցներ ու արձաններ են մարդկութեան նախնական համայնական կարգերի և գիտնականին միջոց են տալիս իրական կերպով ու փոստերով քննել ու հետազոտել տեղի ու տեղը, թէ ինչ տեսակ հանրակացութիւն են ունեցել մեր վարդապետները և թէ այնուհետեւ ինչ եղանակով և ինչ տեսակ կերպարանափոխութիւններ է կրել նա:

Բայց այդ հաւաքական, համայնական սեփականատիրութեան կերպերն ունէին հիմնական պակասութիւններ, եւ այլ կերպ չէր կարող լինել, քանի որ աշխատանքի միջոցներն ու գործիքները նախնական, անկատար էին: Այդ հիմնական պակասութիւններից գլխաւորը կայանում էր նրանում, որ հէնց աշխատանքի գործիքների ու միջոցների անկատարութիւնը գրաւում էր իւրաքանչիւրի ամբողջ ժամանակն աշխատութեան գործադրութեան վրայ, և այդպիսով միայն կարողանում էր իւրաքանչիւրը մի կերպ լրացնել իր պէտքերը, այն էլ անբուսական չափով: Եւ աշխատանքի վրայ իւրաքանչիւրի ամբողջ ժամանակի այդ գործադրութեան պատճառով հասարակութիւնն անխուսափելի կերպով պէտք է բաժանվէր այլ և այլ խաւերի, այլ և այլ դասակարգերի վրայ, և այդ բաժանման պատճառով հաւաքական կարգերը պէտք է սկսէին քայքայվել: Զանազան դասակարգերի երեւան գալով սկսում է առաջ գալ մինչեւ այն ժամանակ չեղած մէկ ուրիշ երեւոյթ, այն է՝ արդիւնների փոխանակութիւնը: Փոխանակութիւնը սկսելով գոյութիւն ունենալ կամաց-կամաց կերպարանափոխվում է աշխատանքի նախկին եղանակը, այն, որ տեղի ունէր հաւաքական, համայնական կարգերում: Նախ երեւան է գալիս անձնական աշխատանքի սկզբնականը, որ իր ետեւից առաջացնում է մի հիմնական պայման — անձնական աշխատանքի գործիքներն ու սկսում են պատկանել մի եւ ն ո յ ն անձին: Այդպիսով աշխատանքի գործիքներն իւրացվում են: Այդտեղից առաջին անգամ սկսում է գոյու-

թիւն ունենալ մասնական սեփականատիրութիւնը: Բայց այդ մասնական սեփականատիրութիւնն ունենում է մի յատկանիշ, որ մինչեւ այժմ էլ դեռ եւս գոյութիւն ունի նահապետական երկրներում, գեղջկական ու արհեստաւորական աշխատութիւնների մէջ: Գա այն յատկանիշն է, որով աշխատանքի արդիւնքն առաջնապէս յատկացվում է իրան աշխատաւորի անձնական գործածութեան համար, գործածութիւն, որ յայտնվում էր աշխատանքի նպատակը: Նախնական հաւաքական կարգերի անկատարութեան ու թերութիւնների շնորհով, այդ կարգերը սկսած լինելով քայքայվել և առաջ բերելով վերոյիշած անձնական աշխատանքը, որի արտաբերած արդիւնքներն այլ եւս գաւում են մասնաւոր սեփականութիւն միեւնոյն անձի, մի կողմից և հէնց այդ պատճառով՝ միւս կողմից՝ երեւան գալով արդիւնքների փոխանակութեան եղանակը — դանցից պէտք է առաջնաւոր, ժամանակի ընթացքում, մրցում, կռիւ նախ անհատների և ապա ամբողջ դասակարգերի մէջ իրար դէմ: Այդ կռոււմ, ի հարկէ, սկսում է տեղի ունենալ բիրտ ոյժը, բռնութիւնը, իրաւաբայութիւնը, եւ հասարակութեան մի մասն աջողում է գրաւել մէկ առանձնաշնորհված դիրք, միւս մասին գործադրել տալով նաև այն բաժին աշխատանքը, որ իրան էր ընկնում առաջ, և ինքն ապրելով ուրիշի այդ աշխատանքով, ձեռքըն առած գործերի կառավարութիւնը Եւ այդպէս տընտեսական նախնական համայնական, հաւաքական կարգերի քայքայման հետ միատեղ սկսում է տեղի ունենալ դասական դերի կռիւը միմեանց մէջ, որ տեւում է մինչեւ օրս և որ ներկայումս ստույգ է աւելի կատարի ու անհաշտ կերպարանք, քան երբ եւ է անցեալում:

Արդիւնաբերութեան միջոցների առկաւ կատարելագործութեամբ և աշխատանքի բաժանման շնորհով, ըստ որում աւելի զօրաւոր դասակարգերը դարձել էին մեծ սեփականատէրեր, առաջացաւ գերութիւնը: Իր ժամանակին գերութիւնն ինչպէս ինքնորոշեալն մէկ անխուսափելի, ճակատագրական հետեւանք էր սեփականատիրութեան կերպերի և աշխատանքի բաժանման, նոյնպէս նա նաեւ անհրաժեշտ ու օգտակար դեր կատարեց մարդկութեան առաջադիմութեան համար: Գերութեան ժամանակները հասարակութեան մէկ առաւել կամ պակաս մեծամասնութիւնը հարկադրված էր կատարել արդիւնաբերական ու հողային աշխատութիւնները, իսկ հասարակութեան միւս մասը սեփականատէր էր և իր ձեռքն էր պցել երկրի կառավարութեան ղեկը: Այդ պայմանը հասարակութեան ոյս վերջին մասին տալիս էր շատ ազատ ժամանակ, որ նա գործադրում էր գիտութեան ու արուեստների աշխատութեան ու մշակման վրայ, որով եւս իր կողմից հանդիսանում էր անհրաժեշտ

նպատակ ու փակտոր առաջադիմութեան: Այդ միջոցին հասարակութեան առանձնաշնորհված մասը տակաւին կատարում էր իր պատմական օգտակար գերը:

Երբ համայնական գրութեան արտաբերութեան միջոցները հասան այն աստիճան զարգացման, որ իւրաքանչիւրը կարող էր այլ եւս արդիւնաբերել աւելի, քան իր անձնական պէտքն էր, անպատճառ պէտք է կաղմբ վեր մէկ այնպիսի դասակարգ, որ, ինքը դադարելով աշխատանք գործադրելուց, կարող էր օգտվել ու ապրել աշխատանք դասակարգի արտաբերած արդիւնքներով: Նոյնպէս եղաւ նաեւ գրութեան հետ: Այդ գրութիւնը սկսաւ կամոց-կամոց վերանալ այն ժամանակից, երբ միւս կողմից սկսել էին առաջ գալ աշխատանքի ուրիշ եղանակներ, որոնք աւելի համապատասխան էին հասարակութեան նիւթական պահանջներին: Ժամանակի ընթացքում նա վերացաւ բոլորովին, տեղի տալով տնտեսական մի նոր միջավայրի եւ շրջանի, ուր ճ ու ռ ա ու լ թ իւ ն ը, աւատական գրութիւնը, եղաւ կարգն ու կանոնը, ունենալով աշխատանքի իրան յատուկ կերպն ու եղանակը: Ճորտութեան ժամանակը իշխող տիրապետող դասակարգն էր աւատական ազնւականութիւնը, որ, ինչպէս գրութեան միջոցին իշխող զինւորական, ազնւական ու հոգեւորական դասակարգերը, իր ժամանակին ունէր իր պատմական օգտակարութիւնը. նա զինւորական ու կրթված դասակարգ էր կազմում, որ պաշտպանում էր զիւզացի-սեփականատէրին բազմութիւ արտաքին թշնամիներից եւ փոխարէնը ստանում էր նրա արտադրած արդիւնքներից յայտնի բաժին եւ յայտնի քանակութիւն աշխատանք: Որպէս գրութեան ժամանակի ազնւական ու հոգեւորական իշխող դասակարգը, նոյնպէս աւատական ազնւականութիւնն իր սկզբնաւորութեան ժամանակ կատարելով այդ օգտակար գերը, կառավարում էր նաեւ երկիրը, հասարակաց գործերը, աշխատանքը: Քայց արդիւնաբերութեան միջոցների զարգացումով եւ դրա հիման վրայ հասարակական գրութեան կերպարանափոխութեամբ՝ այդ առանձնաշնորհված դասակարգերը կորցնում են իրանց օգտակարութիւնը, դառնում են փնասակար, քանի որ այդ հասարակական կերպարանափոխութիւնն այլ եւս աւելորդ է դարձնում նրանց գոյութիւնը: Տնտեսական յարաբերութիւնների նոր կերպերն այլ եւս անխուսափելի, ճակատագրական են դարձնում այդ դասակարգերի վերացումը, որոնք, մանաւանդ այդ միջոցին, որպէս եւ առաջ առհասարակ, օգտվելով իրանց առանձնաշնորհված դիրքով եւ իրանց ունեցած գիտութեամբ ու զինւորական-քաղաքական զօրութեամբ, գործ են զնում աշխատանքը բազմութեան վրայ աւմեն տեսակ բռնութիւն, ճնշում, կամայականութիւն եւ այլն, իրանք էլ արդէն ծուլութիւնից եւ անգործութիւնից վարակված լինելով ամեն տեսակ մոլութիւններով:

Աւատական գրութեան յաջորդում է ներկայ հա-

սարակական կազմակերպութիւնը, որ արդիւնք է արտաբերութեան այժմեան, կապիտալական, կերպերի ու եղանակների եւ որը, նախկին գրութիւնից, միջնադարեան ճորտութիւնից յետոյ առաջացել է մի նոր ստրկական վիճակ. այն է՝ վ ա ռ ձ ա ո ռ ու թ իւ ն ը (salarial): Այդ բուրժուազական հասարակական կազմակերպութիւնը եւ հնագրեան ու աւատական ազնւականների պէս չարդիւնաբերող միայն վայելող ուրիշ աշխատանքը եւ սեփականատէր բուրժուա դասակարգն էլ վերանալու վրայ է այսօր, կատարած ու աւարտած լինելով իր պատմական օգտակար գերը եւ այժմ հանդիսանալով միայն փնասակար աշխատանքը ընդհանրութեան եւ արգելք մարդկութեան յետագայ առաջադիմութեան:

Մեր ներկայ գրութեան III-րդ գլուխը նուիրված էր լինի այդ նիւթին:

Թ Վ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ն Ե Ր

ՆԵՐՄԱՆԵՐ ԹԻՐԻՔԵՐԵՐ

ՅԱՆԴՈՒԳՆ ՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ ՄԸ
ԱՇԽԱՏԱՆ ԽՈՐԷՆ. ՊԱՏՐԻ-
ԱՐՔԻՆ ՎՐԱՅ.

Կ. Պոլիս, 15 մարտ 1894.

Մարտ 13—25-ի կիրակի առաւօտուն Աշգեան խորէն պատրիարք Գում-Գաբուրի մայր եկեղեցին իջած էր մեծ պահքի առթիւ բարոյեցում: Եկեղեցական արարողութիւնը աւարտելէն յետոյ պատրիարքը այցելութիւն տըւաւ տեղւոյն նորընտիր թաղական խորհրդին եւ շնորհաւորեց անոնց պաշտօնը: Այն ինչ խորհրդարանէն զուրս կելէր՝ մայր եկեղեցւոյ բակին եւ փողոցի արտաքին զըրան նրբանցքին մէջ՝ քսան տարեկան վառվառն երիտասարդ մը իր գէմ՝ ելաւ, ճամբան կարեց եւ երկվայրկեանի մը մէջ Գարատաղի խոշոր վեցհարուածեան մը ուղղելով ճակտին՝ բլրակը բաշեց. . . Այս միջոցին եկեղեցւոյ բակի գտնուող բազմութիւնը սրապոյցը եւ տնդոտ լուծեան մը մէջ արձանացած կը կենար: Հրագէնը սակայն կրակ չառաւ, եւ երիտասարդը երկրորդ եւ երրորդ անգամն բլրակը ուժգին բաշեց. վեցհարուածեանը շարունակ կը յամուէր կրակ առնել, որովհետեւ մոռցած էր երկաթը մէջէն հանել: Երբ խնդիրն հասկըցաւ երիտասարդն՝ ալ ուշ էր. այն ժամանակ քոտինքի դայակներ սկսան հոսել նորա յուսակտուր՝ ճակտէն ու այտերէն՝ որ ջղաձգական շարժումով մը հրապէնը առաւ նետեց ժողովուրդին մէջ. առիծի մանչխնով մը գոռալով՝ «Ընծեա՛լ զէնք, ամբողջ ախլես, ամբողջ իրէալոս քար ու քանդ ըլլա՛ր Գիտցիկ, ո՞վ պատրիարք դաւաճան, որ այն ապերախտ զէնքին գնդակներէն առաջինը քեզի եւ երկրորդը ինծի համար էր. . . » Զազիւ այս խօսքերը վերջացուցած էր եւ ահա զինուորներն ու զստիկանները հասան եւ երկուստարդին թնկերը

բոցի համար մի թրամբետ (թմբուկ, տառուկ) էր ապսպրու-
ուած և Պոլիս: Թրամբետը կը բերուի եւ առնուելով
հայ գոմիսիօնձիի մը ձեռքով, որը մեծձանէն (առանց՝ վե-
ձարումի) առնելու արտօնագիր ունէր իր ձեռք և Պոլ-
սոյ մաքսատունէն, Սեբաստիա կը խրկուի: Հազիւ թէ
թրամբետը երեք ժամ հեռացուցած էին Սամսոնէն, երբ
իսկոյն կառավարութեան լուր կը տրուի թէ հայ զինուոր-
ներու համար թրամբետ մը խրկուած է: Անմիջապէս հինգ
վեց ձիաւորներ կը հեծնեն եւ հինգ վեց ժամ հեռա-
ւորութեամբ 2 ա գ ա յ լ Ը ըսուած տեղը կը ձերբակա-
լեն հայ-յիզափոխականներու թրամբետը եւ ահագին
թափօրով կը բերեն Սամսոն: Կը կանչուի խեղճ գոմի-
սիօնձիին, որը կը յայտարարէ թէ Սեբաստիոյ թղթաց գպրոցին
կը վերաբերի: Սակայն ո՞վ կը հաւատայ. կը թեալ միւ-
թէսաբար կըսուի իր ներքին մարդը մերկացնել եւ ա-
մենավատ սրիկայի մը յատուկ հայհոյութիւններով, թուր
ու մուրով նախատել զայն: Խնդիրը կերպով մը կը հե-
ռագրուի Սեբաստիոյ գպրոցի տեսչութեան եւ անմիջա-
պէս հեռագրով պատասխան կը տացուի գոմիսիօնձիի ը-
սածներն ճշմարիտ ներկայացնելով, որով թրամբետը նո-
րէն ճամբայ կը լինէ՝ զարմանալով իր յարուցած այնքան
աղմուկին վրայ:

ԹՄԲՈՒԿ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Ե. ԳԱՐԱՀԻՍԱՐԻ ԿՈՂՄԵՐԻՑ

Հային Գարահիսարն և իր շրջակայք որ միշտ խա-
ղաղ էին, երթալով ծանր անտանելի կացութեան մէջ
կիչնան: Մինչդեռ նիւթական և առեւտրական անկեալ
վիճակն, արմատաց և ուտելեաց սղութիւնն, տնտեսական
զանազան տագնապներ թշուառութեան մէջ կը ձգեն
ժողովուրդն. սուլթանի բռնապետական կառավարութիւ-
նը եւս իւր սարսափելի հալածանքներով, խուզարկու-
թիւններով և ձերբակալութիւններով աւելի եւ աւելի կը
խտտացնէ, կը սաստկացնէ նորա վիճակն, որպէսզի ծայրա-
գոյն գոհաւորութեանց ու նեղութեանց մէջ շուտով
ոչնչանան ամբողջ քրիստոնեաներն, մանաւանդ յատկապէս
հայ տարւոն: Վիշեր ցորեկ մուկի և համեղ կերակուրի
հոտ առնող կատուների նման՝ նա աչքերը չորս ըրած
կաշխառի հոյ յիզափոխականների գոմիթէի անդամներ
գտնել: Առաւել ուրախ եւ երջանիկ կը լինի այն ատեն,
երբ իւր մեծ փորը՝ որ կարծես լցուելիք ալ չունի՝ կշտա-
ցընելու համար գտնէ արեան մեծ երակներ. հարուստ-
ներ, զորս ո և է չնչին պատճառներով բանտ դնէ եւ
ստակ կորդէ: Բռնութեան գոհու պաշտօնեաներ այս
արհեստին մէջ խիստ յառաջ դացած են. թէ հայ և թէ
թիւրք տգէտ մուրացիկներ իրենց գործիք դարձուցած՝ ի-
րենց տալած վաճառականների և զրամատէրների մասին
խապարնամէներ (զեկուցագիր) գրել կուտան մի մի սնո-
տի յանցանքներ վերագրելով եւ կը դնեն բանտ ժամա-
նակներով, մինչեւ որ իրենց փորն կշտացնեն եւ ունեցած-
նին առնեն: Այս մասին մի քանի դէպքեր կարժեն գը-
րել աստ:

Վաղաքին մէջ իւր գործերով նշանաւոր հանդի-
սացած է Սէրճանեան Սարգիս անունով խենթ մը, որն
կառավարութեան ձեռք խաղալիք դարձած՝ շատ մը մատ-

նութիւններէ ու զրպարտութիւններէ վերջ՝ մի քա-
նի ամիս առաջ մեկնեցաւ Սեբաստիա վայի փաշային
քով, որն մեծ պատիւներով ընդունեց զայն, գրեմական և
այլ պարգեւներ տալով հրամանագիր մ'ալ շնորհեց ո-
րով կիմացներ թէ սա արժանիքի տէր մի անձ է պէտք է
բոլոր խօսքերուն հաւատ ընծայել եւ անմիջապէս գոր-
ծագրել ինչ որ կը պահանջէ նա: Սարգիս զեռ Գարա-
հիսար չը մտած հրաման եկաւ եւ շատ մը վաճառակա-
նաց աներ ու խանութներ խուզարկուեցան յիշատիտա-
կան թուղթ, զէնք եւ ռազմավթեր գտնելու յուսով:
Բայր տխուր կառավարութեան յոյսերն չիրականացան զի
ոչինչ գտած էր: Անկից վերջ խենթ Սարգիս շնորհիւ
վայի փաշայի էմիրնամէին (հրամանագիր) եւ վայելած
ընդունելութեանց՝ կը շարունակէ իւր մարդափեսա ճա-
նահայտարհն:

Սօտ օրերս կառավարութիւնը մեծ դատ մը ունե-
ցաւ, այն է կատուի մը դատը: Հասարակ մէկ մը հայ վա-
ճառականի մը դէմ ատելութիւն ունենալով կուզէ ան-
կէ վրէժ լուծել, եւ ահա կըսկսի գատավարութիւն մը,
իւր թէ հայ վաճառականն շատ մը կատուների հետ իւր
հակառակորդին կատուն ալ սպաննելով՝ կաշիներն կը ժո-
ղովէ զորս Լարսպա պիտի ուղարկէ եղբւր շահագործելու
համար. կատուներն սպաննելը մեղք եւ մեծ յանցանք
մըն է ըսելով քանիցս անգամ արդարադատ դատարա-
նըն ամբաստանեալ վաճառականն կանչեց դատը անտնե-
լու համար, եւ շարունակուեցաւ մինչեւ որ վաճառակա-
նըն ճարահատեալ կշտացուց վատերի փորն, որով հա-
զիւ վերջացաւ մեծ դատն:

Լարս մէկ կողմէն արմատաց գներն կը բարձրանան
քաղաքապետութիւնն կըսկսի ժողովրդին վրայ հայրական
գութ տածել եւ յանկարծ միտքը կիչնոյ հացի գինն եւ
հացագործներն, կը մտածէ որ կարգն եկած է՝ ա-
նոնցմէ ալ մի քիչ ուտել կշտանալ. եւ կըսէ կորովի ժո-
ղգասէր ոգով մը, թէ հացի օխայի գինն կը բարձրա-
նայ եւ հացագործները կը շահին առանց ինծի բաժին
մը հանելու, եւ կառաջարկէ այնպիսի գին մը, որ չէին
կարող շարունակել իրենց արհեստը. որով կըստիպուին
ամենքը միասին դադրեցունել գործերը: Այս պատը-
ռակ կը բաւէր նոցա գաղանջին կամաց գործադրման.
ամենքը մէկ լեցուց բանտերի մէջ եւ ի պատիժ իւրաքան-
չիւրէն 5-ական ոսկի պահանջեց, միանգամայն հրամայե-
լով թէ պէտք է այսուհետեւ անհատական փուռեր
փակուին և միայն մզկիթներու ու իրենց իրաւասութեան
տակ գտնուող փուռեր բանալու իրաւունքն ունենան:
Հրամանները վերջացած էին, կը մնար միայն ստակ կորդե-
լու միջոցներն. խեղճ վարպետներ օրերով բանտերու մէջ
սպասեցնելէն յետոյ արձակեցին ամենքին որոշուած գը-
րամն իւր կաշառք առնելով: Մի քանի ամիս վերջ փակ-
ուելու դատապարտուած փուռերն ալ յանկարծ բացուե-
ցան զի անոնց տէրերուն կողմանէ ալ գրամ շորթած էին:
Այսպէս ամեն վայրկեանների մէջ աշխարհի առջեւ ա-
տելի դարձած թիւրք պաշտօնեաներն գեղեցիկ միջոց-
ներ կը խորհին ժողովրդի արիւն-քրտինքէ ժողովուածը
գրպանին լեցնելու համար. յիրաւի շատ խելացի եւ նը-
բամիտ են:

Այժմ Մուհամմէտի զաւակաց մէջ մի սրբազան փա-
փազ եւս տիրապետած է. այն իսլամն որ կը կարողա-

նայ քրիստոնեայ մը կրօնափոխ ընելով իսլամութիւն ըն-
դունել տալ՝ նա ուղղակի Մուհամմէտի գիրկը պիտի
երթայ: Այս հսկայ եռանդով կաշխատին, և յաջողեցան
զանազան անարգ միջոցներով եւ բռնութեամբ Ս ի ս, Է ն-
տ ի ր է ս, Ա գ ս է վ ի ն տ ի կոչուած գիւղերէն հայ կի-
նեւ եւ աղջիկներ առեւանգելով եւ լեռները տանե-
լով՝ նոցա կուսութիւնն ու պատիւ ազարտել և յետոյ
իրենց կնութեան առնել հակառակ հայ կնոջ ազատ կա-
մաց. արդէն բողոքներ ու լռաչափներ անլսելի են:

Իւր արհեստով հաղիւ իր օրապահիկը հայթայթող
մի երկաթագործ, Յովհաննէս անուհով, իր բով ունէր
մի քանի հայ եւ թիւրք աշակերտներ: Թիւրք աշակերտնե-
րէն մին՝ վարպետին դէմ ունեցած ատելութենէն գրգեալ
կը վազէ կառավարութիւնը՝ իրապարնամէ (զեկուցագիր)
տալու: Հաղիւ անցած էր մի ժամ և ահա ամբողջ կառա-
վարութեան պաշտօնեաներէն մեծէն մինչեւ պղտիկը, զին-
ւորական մեծ պաշտօնեաներ, բազմաթիւ ոստիկաններ հան-
գերծ թիւրք խուժանով կուգան խուզարկել հայ երկա-
թագործներու տները ու խանութները. ամեն անկիւննե-
րը, ծակ ու ծուկ իրար կանցնեն, շատ մը թուով մար-
թիներ, այլ և այլ գէնքեր, փամփուշտներ ևն գտնելու
յուսով: Տեւեց ամբողջ ժամեր աւազակ պաշտօնեայնեբու
խուզարկութիւնը, բայց իր բաժինն եղաւ ձեռնու-
նայն եւ ամօթահար յետս դառնալ:

Սոյն օրինակ դէպքեր անթիւ են եւ սովորական
դարձած. թէ քաղաքէն եւ թէ հայ գիւղերէն յե-
ղափոխականներ գտնելու պատրուակաւ անհամար մար-
դիկներ բանտ կը գնեն. դրամ տուողը ազատ կարծիքով
իսկ չի տուողին ամիսներով սպասել ճակատագրուած է
բանտերի մօտ ու խոնարհ խորշերը: Երբ պահիկ մը եւս
գիւղացիների ներքին վիճակն գիտեմք սրտերնիս կը տրո-
րի. հարկահաւաք պաշտօնեաներ կը վիտան խեղճ գիւ-
ղացւոց աներն եւ օրերով պիտի սպասեն. նոքա չունին
առօրեայ գարիէ չոր հաց փորերնին կշտացնելու համար.
իսկ անպատճառ թիւրք ոստիկաններուն եւ պաշտօնեա-
նեբուն ոչխարներ մորթել, համել կիրակներն գտնել,
ձիերու համար գարի բերել եւ ի վերջոյ առաւօտեան
դէմ անոնց տնական կահարասիներն, անկողիններն լուծ
վարող եղբերն գրաստներու վրայ բեռցած կը տանին
ծախելու ուր որ հրամայեն: Ատենց մէկ ժամ թիւրք շարա-
գործներով յեցուն են ամեն ճանապարհներ, որք կը կո-
ղպտեն միայն հայեր:

ԱՌԻԻՄ.

ԵՒՐՕՊԵԱԵՆ ԿԵՆՆՔԻՅ

ԼՈՐԴՎԵԿ ԿՕՇՈՒՏ

Այդ պանծալի ծերունին, որ անհետացաւ, դարուս
նշանաւոր քաղաքական գործիչներից մէկն էր: Գարիբալդի
և Մաձձինի իտալիայի համար և Կոշուտ Հունգարիայի
համար կանգնած են միահաւասար բարձրութեան վրայ:
Կոշուտը հերոսն էր իր ազգի, Կոշուտը հերոսն էր իր հա-
մագումների, որոնց մնաց հաւատարիմ սկզբից մինչեւ վերջ:
Կոշուտն իր քաղաքական համոզումներով ռամկավարական
հանրապետական էր եւ իր ամբողջ գործունեութեամբ
նա ձգտում էր այդ սկզբունքների համաձայն քաղաքա-

կան գրութիւն ձեռք բերել իր հայրենիքում, որը միեւ-
նոյն ժամանակ պիտի անկախ լինէր Աւստրիայից: Այդ հա-
մագումներով նա սկսաւ գործել և երբ ի վերջոյ իր յեղա-
փոխական շարժումներով պարտութիւն կրեց և իր քա-
ղաքական ձգտումները չը պսակվեցան, նա նախամեծար
համարեց յօժարակամ արքային գնալ, բան հաշտվել իրերի
գրութեան հետ իր հայրենիքում: Կոշուտը 1848 թ. ի հան-
րանքապական յեղափոխական շարժումներում գործող
ամենալուսաւոր անձնաւորութիւններից մէկն էր: Նա գա-
ղափարի զինւոր էր: Նրա գլխաւոր զէնքը ռամկավարա-
կան-հանրապետական գաղափարն էր, որի թելադրած
ձգտումների իրագործման համար գործում էին Եւրոպա-
յի այն ժամանակաւ լուսաւոր գլուխները, որոնց թը-
ւում եւս Կոշուտն իր հայրենիքում: Երբ, 1867 թ. ին, ա-
ւստրո-պրուսական պատերազմից յետոյ Հունգարիան յայ-
տարարվեցաւ քաղաքականապէս անկախ, Կոշուտը, դարձեալ
հաւատարիմ մնալով իր համագումներին, չը կամեցաւ ճա-
նաչել հունգարական սահմանադրութիւնը, որ իր տեսա-
կէտից խիստ սահմանափակ էր և համապատասխան չէր
ժողովրդային ընդհանրութեան պահանջներին ու ձրգ-
տումներին, որոնց իրագործման համար էր նա նուիրել
իր հսկայական եռանդը, ոյժերը, ընդունակութիւնները,
իր ամբողջ կեանքը: Եւ այդպիսով Հունգարիայի ան-
կախութիւնից յետոյ էլ Կոշուտը մնաց անհաշտ նրա
քաղաքական կարգերի հետ եւ մինչեւ իր վերջին շուն-
չը շարունակեց նախադասել իր յօժարակամ արքային,
եւ քանիցս ժողովրդի կողմից ընտրվեցաւ անդամ հուն-
գարական Ազգային Ժողովի, բայց միշտ մերժեց: Այդ
ամբողջ ընթացքի պատճառն այն էր, որ իրականա-
ցած չէր Կոշուտի իդէալը — հունգարական հանրա-
պետութիւնը: Եւ նրա այդ իդէալը մնալով անիրա-
գործ, իր հայրենիքը նրան տեսաւ շատ ուշ եւ արդէն
ոչ կենդանի. Կոշուտին երախտապարտ ու պաշտող հուն-
գարական ժողովրդի ընդհանուր խորին սուգի և յուզ-
ման ու իրարանցման մէջ՝ մեծ յեղափոխականի միայն
նշխարները հանդիսաւոր թափօրով մտան հունգարա-
կան երկիրը, որ իր անկախութեամբ գլխաւորաբար պար-
տական է իր հերոսին: Աղբերգական վտանգն: Հաս
ստակաւթիւ են եղել նոյն իսկ Եւրոպայում այնպիսի
քաղաքական գործիչներ, որ Կոշուտի նման միշտ բար-
ձր պահէին իրանց միանգամ ձեռք բերած համո-
զումների դրօշակն ու իրանց իդէալը:

Կոշուտի բուն կեանքը ներկայանում է իրրեւ
հունգարական ժողովրդի ազատական շարժումների պատ-
մութիւնը: Նա ծնվել է 1802 թ., 16 սեպտեմբերի,
Հունգարիայի Մոնոկ քաղաքում: 1842—1844-ին նա
խմբագրապետն էր «Pesti Hirlap» թերթի, որ արմա-
տական դիմադրականների օրգանն էր: 1848 թ. Փը-
րանսիական քաղաքական շարժումները, ինչպէս շատ եր-
կրներում, նոյնպէս Հունգարիայում, ունեցան իրանց
ազգեցողութիւնը: Ընտրվելով հունգարական Ազգային Ժո-
ղովի պատգամաւոր՝ Կոշուտի ծրագիրն էր քաղաքական
ընդարձակ ազատութիւնների պահանջները: Քաղաքա-
կան դէպքերի շնորհով Աւստրիան ստիպվեցաւ հուն-
գարական առանձին միեկստրութիւն (նախարարութիւն)
ստեղծել, որի մէջ ֆինանսական միեկստրի պաշտօնը սկը-
սաւ կատարել Կոշուտը: Քիչ ժամանակից յետոյ, տես-

ներով Աւստրիայի հակառակութիւնները, Կոշուտը, հունգարական Ազգային Ժողովի համաձայնութեամբ, մեծ պարագունտ կազմեց եւ անտրիական կայսերական Հաւաքութեան տոհմի գերիշխանութիւնը մերժեց ճանաչել Դրա վրայ տեղի ունեցաւ Աւստրիայի յարձակումը Հունգարիայի վրայ, և Ռուսաստանի Աւստրիային տված զօրքերի վճռական օգնութեամբ 1849 թւին, Հունգարիան, մի շարք հերոսական ճակատամարտերից յետոյ, յաղթվեցաւ Կոշուտը, որ այդ պատերազմի հագին էր եւ որ այդ ժամանակ Հունգարիայի կառավարիչ-գլխատնօրն էր, ստիպվեցաւ կառավարութեան ղեկը յանձնել մէկ ուրիշ հունգարացիի եւ ինքն անցաւ Թիւրքիա, ուր փոքր Ասիայի մի քաղաքում բանտարկվեցաւ: Ապա, բոլորովին աղքատ, գնաց Անգլիա եւ այնտեղից Իտալիայի Տուրին քաղաքը, ուր մնաց յօթարական արտորի մէջ մինչեւ իր մահը, այն է անցեալ մարտ 21-ը: Հունգարիայի Պեշտ մայրաքաղաքում տեղի ունեցաւ նրա թաղումը շատ մեծ ու փառաւոր հանդէսով: Ամբողջ Հունգարիան ազգային խոր սուգի մէջ էր եւ մինչեւ անգամ, զանազան հակառակութիւնների պաճառով տեղի ունեցան արիւնայեղ յուզումներ:

Իր ժամանակին Կոշուտի իդէալը մեծ էր եւ թէեւ այսօր մարդկութիւնը ձգտում է դէպի շատ աւելի բարձր ու լայն իդէալի, բայց Կոշուտի, իրրեւ յեղափոխական ու քաղաքական գործիչի, կեանքն ու գործունէութիւնը, չը նայած իր սխալներին, մեծ է, փառաւոր ու օրինակելի:

ԱԿՆ — ԵԱՆՑ.

ԲՈՒԳԱՐ ԵՒ ՀԱՅ ՍՈՑԻԱԼԻՍՏՆԵՐԸ

Բուլղարական սոցիալիստական կուսակցութեան օրգան «Գրուդար»-ի («Ընկեր») անցեալ տարւայ հոկտեմբեր 22-ի համարում վերտնված է մի յօդուած խիստ համակրական շնչակեան կուսակցութեան վերաբերութեամբ: Յօդուածի վերնագիրն է «Ողջոյն սոցիալիստական Հայաստանին»: Իր բուլղար ընթերցողներուն ընդհանուր ծանօթութիւններ տալով կուսակցութեանն ծրարագրի, գործունէութեան ու «շնչակի» մասին, որպէս եւ յիշատակելով թիւրք կառավարութեան բարբարոսութիւնները, որոնք այնքան ծանօթ են բուլղարական ժողովրդին, յօդուածագիրը կանգ է առնում Մարգուանի 8 սեպտեմբերի անմոռանալի դէպքի վրայ: Նկարագրելով դէպքը, զգացված շեշտով նա կենսագրական տեղեկութիւններ է տալիս մեր անմահ ընկեր Բարսեղ Զաքարեանցի մասին, յիշելով որ նա ունէր բուլղար սոցիալիստ ընկերներ ուսանողական նստարանի վրայ ծննդավում և այդ ընկերներից մէկն ինքը յօդուածագիրըն է: «Մեր այդ ընկերը, բացակամու է նա, իր կեանքը զոհեց սոցիալիստական գաղափարի համար — ողջոյն նրա յիշատակին: Ողջոյն սոցիալիստական Հայաստանին»: Վերջացնելով իր խօսքը, յօդուածագիրը յիշում է ինչպէս բուլղար կառավարութիւնը վստաբար հալածեց հայ սոցիալիստականներին Ռուսչուկում սրանից երկու տարի առաջ և թարգման է հանդիսանում բուլղար սոցիալիստների բարոյական, եղբայրական կապերի հայ սոցիալիստների

հետ, յայտնելով նրանց բաղձանքը մէկ օր բուլղար, մակեդոնացի և հայ սոցիալիստների մէջ հաստատված տեսնել իրական գործակցական կապ:

Ողջոյն սոցիալիստական Բուլղարիային:

Ա.

ԿԵԹԵՎԱՐԵՐՈՆ ԵՒ ՊԵՏՐՈՒՄԵՆԵՆ ԳԱՂՏՆԻՔՆԵՐ

Մենք մեր պարտքն ենք համարում հրապարակութեան տալ վստահելի աղբիւրից վերջին լուսին մեր ստացած հետեւեալ վերին տասնիմանի կարեւոր տեղեկութիւնները, որ տակաւին կառավարական ու պատրիարքական խիստ գաղտնիքներ են: Մենք շտապում ենք նախազգուշացնել հայութիւնը, մերկացնելով այն դաւերը, որ լարվում են նրա դէմ Կ. Պոլսի ու Երուսաղէմի դաւաճան պատրիարքութիւնների եւ Բ. Դոսան մէջ: Հայ հասարակութիւնը թող լինի դատաւորը:

Ահա մեր ստացած տեղեկութիւնները. —

Նիկիկիայի կաթողիկոսական աթոռի շուրջը դաւեր են լարվում, դաւեր, որոնք որոշման ձեւեր ստանալու կերպարանք են առել Բ. Դոսան եւ Կ. Պոլսի ու Երուսաղէմի պատրիարքական աթոռների եւ նրանց գահակալների մէջ: Մտադրութիւն կայ թիւրքահայերին ղնել Նիկիկիայի կաթողիկոսական գահի կամ իշխանութեան ներքեւ, բայց ոչ արգի կաթողիկոսի ձեռքի տակ: Նիկիկիայի ներկայ կաթողիկոսին որեւէ միջոցով պէտք է բռնազատեն հրաժարվելու, մի տեղապահ նշանակելով Երուսաղէմի վանքի միաբան եպիսկոպոսներից մէկը, օր., Երեմիայ արք. Տէս-Սահակեանցը, որ Երուսաղէմի պատրիարքի ներկայ փոխանորդն է, ապա կաթողիկոսութիւնը պէտք է միացնեն յանձին Երեմիայ կամ Խորէն Աշրգեան պատրիարքներին: Էջմիածնի աթոռը պէտք է թողնեն ռուսահայերին՝ յանձին Խորմեանին: Եւ արդէն այդ նպատակի սկզբնական գործադրութիւնն էր, որ Խորմեանի կոնդակները Կ. Պոլսի հասնելուց յետոյ, յետ դարձրին Էջմիածնի ռուսական դեսպանատան միջոցով:

Նիկիկիայի կաթողիկոսի վերջին անգամ վստա վառված անխուփ հիւանդանալը, ասում են, դիմամբ էր պատրաստված մէկ անհաւատարիմ ծառայի ձեռքով, որ կաշառված էր կառավարութեան կողմից: Բայց, յարմար ժամանակին դառման արվելով նա այժմ առողջանալու վրայ է:

Ի սում ենք նորնպէս, որ Զատիկից յետոյ Երուսաղէմի տիրահաւակ Զարութիւն պատրիարքը, որ անցեալները Կ. Պոլսից մեկնեցաւ, ստանալով սուլթանից մեծ շքանշաններ ու պարգեւներ, իր վատառողջութիւնը պատրուակելով, իր թեմերին այցելութեան պէտք է գնայ, իբր օգափոխութեան համար: Այդ պիտով հետզհետէ Նիկիկիայի սահմանները, մի որոշված տեղ պիտի հասնէ, ուր պիտի տեսակցութեան հրաւիրէ Նիկիկիայի կաթողիկոսին, որպէսզի նրան համոզէ իր ծերութիւնն առաջ բերելով՝ հրաժարվել իր պաշտօնից:

Յօդուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և գրամ ուղարկել հետեւեալ հասցեով. —

Athènes. (Grèce). — M. Beniard. Poste restante.

Ըթէնք.

Հայկական ազատ ապստան.